

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020 թվականի սեպտեմբերի 16-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Իսափիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ Ա դասարանի ծնողական մոդուլը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ան. Քոչարյանը և տնօրենի անմիջապես օգնական կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները:
2. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. - «Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները» հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ան. Քոչարյանը: Նա նշեց, որ միահամուռ ուժերով կկարողանան լուծել ուսումնական գործընթացում առաջացած խնդիրները:

Իր խոսքում դասղեկ Ան. Քոչարյանը նշեց, որ այս ուսումնական տարին միանգամայն տարբերվում է նախորդ ուսումնական տարիներից նրանով, որ համաձայն Covid-19 ուղեցույցի, աշակերտները դպրոց են հաճախելու խմբերով՝ յուրաքանչյուր խումբը շաբաթական 3 անգամ, պետք է խստագույն հետևեն հակահամաճարակային կանոնների պահպանմանը, նախապես ջերմաչափվեն տանը, դպրոց ներկայանան դիմակով, հաճախ օգտվեն դպրոցում առկա ձեռքերի ախտահանման միջոցներից, պահման են 1,5-2 մետր սոցիալական հեռավորություն: Նա ասաց, որ դասարանում արդեն սեղան, աթոռները դասավորված են ըստ ուղեցույցի պահանջների:

Իրոշեցին. - Աշակերտներին իրազեկել հակահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ, հետևողական լինել դրանց պահպանմանը, օգնել դասղեկին այս բարդ և պատասխանատու գործում :

2. Լսեցին. - Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Ան. Քոչարյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Մկրտչյան Ամալյա
2. Վարդանյան Լուսինե
3. Վարդանյան Արմինե
4. Հովհաննիսյան Լիլիթ
5. Մարտոսյան Մարինե

Ակտիվ քվեարկության արդյունքում ձևողական խորհրդի նախագահը ընտրվել է
 Ամալյա Մկրտչյանը:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:



3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

Դասղեկը նշեց, որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9⁰⁰
 ին, ավարտվելու են 13⁰⁰-ին (դասամիջոցները կրճատվել են), աշակերտները
 դասամիջոցներին տեղաշարժվելու իրավունք չունեն: Ուսուցումը վեցօրյա է:

Դասղեկը հորդորեց ձևողներին հետևողական լինել իրենց երեխաները
 նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ
 ժամանակին, նախապես ցերեպաշափված, պաշտպանիչ դիմակով, անհրաժեշտ
 պարագաներով, աշակերտավայել կեցվածքով: Պահպանեն
 հակահամաճարակային բոլոր կանոնները:

3. Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն
 աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ,
 բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, հետևեն
 սանիտարահիգիենիկ վիճակին:

Ժողովի նախագահ՝ 
 Բարտուղար՝ 

/Արմենուհի Հովհաննիսյան /
 /Երանուհի Մարգարյան /